

ՀԱՅՐԴԱՍԻՐԿԱԳԻՒՄ և ԳՅՈՒԻՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏՈՑ ԲԱԼԱՆՍԻ ԱՌԱՆՑՔԻ ՑԱՊՖԱՆԵՐԻ ՈՂՈՐԿՄԱՆ (ՉԱՓԱԲԵՐՄԱՆ) ՀԱՄԱՐ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Խճեներ


Առանցքների, գլանիկների և տրիբների (փոքր տանող ատամնանվակ) ցապֆաների դարձյակների մակերևույթների մաքրությունը բացառիկ նշանակություն ունի ժամացուցային մեխանիզմների համար։ Այն ապահովում է առանցքների ցապֆաների և պլատինների միջև ցածր շփման գործակից, որի հետևանքով մեխանիզմի մեջ պակասում է էներգիայի կորուստը և բարելավում զարթուցիչ ընթացքի որակը։ Առանձնապես կարևոր նշանակություն ունի բարանսի առանցքների մաքրությունը։

Երեանի ժամացուցի գործարանում զարթուցիչը տրիբների և գլանիկների ցապֆաների ողորկումը կատարվում է «ՃԻԾ» սեղանի խառատային հաստոցի վրա։

Գլանիկը կամ տրիբը դրվում է սեղմիչ ցանքայի մեջ և նրանց հաղորդվում է պտտական շարժում 1200—1500 պտ/րոպե արագությամբ։ Այդ դեպքում, գլանիկի կամ տրիբի ազատ ցապֆայի վրա պահվում է հարթ ողորկիչը, որը թեթևակի սեղմկում է ցապֆայի վրա և դանդաղորեն տեղափոխվում ողորկիչի երկարությամբ։ Ողորկիչի և ցապֆաների շփմելու ժամանակ խորդուրուրության կատարները կիպահովում, հարթվում են, ստացվում է փայլուն և հղկված մակերևույթ։

Բարանսի առանցքների (1) ցապֆաների հղկումը փոքր ինչ այլ է։ Սկզբում նրանք հղկվում

են «C—8» հատուկ հղկիչ հաստոցի վրա պահանջված պրոֆիլով, որը ձեռք է բերվում պինդ համաձուվածքից պատրաստված, համապատասխան պրոֆիլ ունեցող սկավառակի (2) և բարանսի առանցքի փոխադարձ պտտումով (նկ. 1)։



Նկ. 1

Այդպիսի հղկման դեպքում մակերևույթի մաքրությունը ստացվում է 10—12-ի սահմաններում։ Ավելի մաքուր մակերևույթ ստանալու համար բարանսի առանցքի ցապֆան շափաթերվում է պաստայով, որը, ինչպես տրիբների հղկումը, կատարվում էր «ՃԻԾ» սեղանի խառատային հաստոցի վրա։ Սակայն հղկիչը փոխարեն այստեղ կիրառվում էր պաստան (դիամանտինից և մոմից)։ Հղկման տվյալ մեթոդի օժանդակ ժամանակը շատ մեծ է և կազմում է դետալները տեղակայելու, շրջելու և այլնի վրա հիմնականում

ծախսվող ժամանակի 70%-ը, դա սահմանափակում է արտադրողականությունը (ոչ ավելի, քան 1800—2000 դետալ մեջ հերթափոխի ընթացքում): Բացի դրանից, տվյալ մեթոդի թերությունը հանդիսանում է խոտանի բարձր տոկոսը: Դետալը ցանգայի մեջ տեղադրելիս ցապֆաները շատ հաճախ ընկնում են ոչ թե ցանգայի անցքի կենտրոնը, այլ նեղանցքների մեջ և կոտրվում աշխատելու ժամանակ: Կոտրվում են նաև բալանսի բույթերը (շտիֆտ): Այդպիսի խոտանը կազմում էր թողարկվող արտադրանքի մոտ 10—15 %-ը:

Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, մշակման որակը բարելավելու և խոտանը կրճատելու նպատակով՝ մեր կողմից կառուցվել է հաստոց՝ բալանսի առանցքի ցապֆաների շափաբերման համար: Աշխատանքի սկզբունքը հետևյալն է: ոետին սկավառակը (4) իր շարժումը ստանալով էլեկտրամոտորից փոկավոր փոխանցումով փոկանիվի միջոցով, ազատորեն պտտվում է իր առանցքի շուրջը (նկ. 2):

Բալանսը առանցքի հետ դրվում է երկու եղանիկների վրա (2), որոնց նեղանցքների մեջ մտնում է բալանսի առանցքը, իսկ առանցքի երկու ծայրերը ազատորեն դրվում են գալիս եղանիկներից: Եղանիկները մոնտաժված են կալիչի (derjавака) վրա (1), որը շարնիրի ձևով միացած է սալին և եղանիկի զապանակները (5), իսկ նրանց հետ միասին և բալանսը ուժգին սեղմվում է ոետին սկավառակին: Կալիչի վրա ամրացված է անկյունաքանոն, որը արտսով միանում է ոտնակին: Դետալը տեղադրելու և հանելու համար ոտնակը սեղմվում է, ընդամեն եղանիկներով կալիչը պտտվում է իր առանցքի շուրջը և եղանիկները հեռանում են ոետին սկավառակից: Այդ դեպքում մշակվող դետալը հանվում է և դրվում նորը, որից հետո ոտնակը արձակվում է: Եղանիկները վերադառնում են իրենց սկզբնական դիրքը, բալանսը սեղմվում է սկավառակին և ոետին սկավառակի ու բալանսի միջև առաջացող շփման ուժի հետևանքով բալանսը պտտվում է:

Միաժամանակ, բանվորը երկու կողմից պատայով թասը մատուցում է ցապֆաներին և շափաբերում դրանց: Առանցքային տեղափոխությունից խուսափելու համար, կալիչի նեղանցքի մեջ դրվում է հոլովակ (3), որի առվակի հաս-

տությունը հավասար է բալանսի հաստությանը: Բալանսը մտնում է հոլովակի առվակի մեջ և դրանով բացառվում է առանցքով բալանսի առանցքային տեղափոխության հնարավորությունը:

Առանցքի բովակի կամ ցապֆաների կոտրումը բացառվում է, քանի որ բութակն ու ցապֆաները գտնվում են անվտանգ գոտում: Այս դեպքում կրճատվում է դետալի տեղադրման, շրջման և հանման օժանդակ ժամանակը, ինչպես նաև շափաբերման վրա ծախսվող հիմնական ժամանակը: Բայց օժանդակ ժամանակն էլ մեծ է: Այն կրճատելու նպատակով, եղանիկները ունեցող ձուլվող կալիչի փոխարեն կիրառել են միակողմանի պտտվող սկավառակը (նկ. 3):

Սկավառակի վրա (1) գտնվում են հինգ փորատներ, որոնց մեջ մտնում են երկու եղանիկները (4) և հոլովակները (3) ունեցող սողանը, որոնք հենվում են զապանակին (5): Սկավառակի լիսեռի ծայրին գտնվում է խորհային կամ հոլովակային մեխանիզմ, որը թույլ է տալիս ստանալ սկավառակի միակողմանի պարբերական պտտական շարժումը: Մխոցակոթը (10) միացած է ոտնակին, որի յուրաքանչյուր սեղմման դեպքում մեխանիզմի միջոցով սկավառակը (1) շրջվում է 1,5 պտույտով:

Առաջին դիրքում եղանիկների նեղանցքներում դրվում է բալանսով առանցքը, իսկ ինքը՝ բալանսը, մտնում է հոլովակի առվակի մեջ: Եթե սկավառակը շրջվում է 1,5 պտույտով, բալանսով եղանիկները առաջին դիրքից անցնում են երկրորդ դիրքը: Այդ դեպքում բալանսը շփվում է պտտվող ոետին սկավառակի հետ և շփման ուժի շնորհիվ պտտվում է:

Պաստայով թասը (8) պարուղակով միանում է մխոցակոթին, որը մտնում է կանգնակի (6) անցքի մեջ և հնարավորություն ունի առաջընթաց և պտտական շարժում կատարել իր առանցքի շուրջը:

Բալանսի պտտվելու ժամանակ բանվորը երկու կողմերից պատայով թասերը մատուցում է առանցքի ցապֆաներին և շափաբերում դրանց: Զապանակի (9) ուժով արձակվելուց հետո թասերը վերադառնում են սկզբնական դիրքը: Թասի դիրքը փոփոխելու համար շափաբերումից հետո ամեն անգամ բանվորը պտտեցնում է դրանց իրենց առանցքի շուրջը, մինչև տվյալ







Fig. 2



л4. 3.

շրջանագծով պատառայի լրիվ օգտագործումը, ո-
րից հետո պատուտակամերի (7) շրջումով կանգ-
նակը (6) բարձրանում կամ իշնում է, այսինքն՝
պատառայի վրա չափաբերման հետքերը ստաց-
վում են շրջագծերով, որոնց շառավիղը փոխվում
է զրոյից մինչև թասի շառավիղը։ Դրա հետե-
վանքով ընդունվում է թասի ամբողջ մակերեսը
և պատան ուղղիոնալ կերպով օգտագործվում է։
Պատառայի լրիվ օգտագործումից հետո թասը
փոխվում է։

Չափաբերումն ավարտելուց հետո սեղմվում
է ոտնակը, որի հետեւանքով սկավառակը դար-
ձյալ շրջվում է 1,5 պատուտով։ Այնուհետև մշակ-
ված ղետալը հիմքի վրա եղած անցքի միջով
ընկնում է թեք հարթության վրա և դուրս է գա-
լիս, իսկ հաջորդ ղետալը, որը մինչև այդ դրվել
էր առաջին դիրքում, անցնում է երկրորդ դիրքը
ողորկման համար։

Ողորկվող մակերեսի որակը շատ բանով կախ-
ված է արագությունից, որքան մեծ է արագու-
թյունը, այնքան ցապֆաների մակերեսը մաքուր
է ստացվում։ Իսկ բալանսի պտտվելու արագու-
թյունը կախված է ուստինե սկավառակի և բա-
լանսի սահելու գործակցից, որն իր հերթին կախ-
ված է բալանսը ուստինե սկավառակին սեղմելու
ճիգից, այսինքն՝ զսպանակի ուժից (5) և պաս-
տան ցապֆաներին սեղմելու ճիգից և այլն։ Բա-
լանսի պտույտների թիվը կախված է ուստինե
սկավառակի D տրամագծի ու բալանսի d տրա-
մագծի հարաբերակցությունից և սկավառակի

պտույտների թիվը՝ n₇

$$n_r = k_n \frac{D}{d}$$

որտեղ k_n ՝ սահելու գործակիցն է.

տվյալ դեպքում՝ D=90 մմ

n_r=1400 պտ/րոպե

d=23 մմ

K_n-ն որոշվում է էքսպերիմենտալ ձևով.
տվյալ դեպքում տատանվում է 0,5-ից մինչև
0,7-ի սահմաններում։

Բալանսի պտույտների թիվը մեկ րոպեում
տատանվում է 3500-ից մինչև 4000 պտ/րոպե
սահմաններում, որը մոտավորապես 2,5-3 ան-
գամ արագ է, քան սեղանի խառատային հաս-
տոցի վրա չափաբերելու նախկին եղանակի դեպ-
քում եղած պտույտների թիվը։

Երեանի ժամացույցի գործարանում չափա-
բերման տվյալ մեթոդի արմատավորումը աշխա-
տանքի արտադրողականությունը բարձրացրել է
2,5-3 անգամ. մեկ հերթափոխում 1800—2000
հատի փոխարեն արտադրվում է 6500—7000
հատ ղետալ, բարելավվել է ողորկման որակը,
իսկ ցապֆաների կամ բույթերի կոտրվելու խո-
տանը վերացվել է։ Դրա հետեւանքով տնտեսվելի
է 52 հազ. ոուրթի։

Տվյալ մեթոդով կարելի է ողորկել ոչ միայն
զարթուցիչների բալանսի առանցքների ցապֆա-
ները, այլև նման կոնստրուկցիայի գործիքների
և մեխանիզմների մյուս գլանիկները կամ ա-
ռանցքները։

ԱԼՅՈՒՄԻՆԻ ԷԼԵԿՏՐՈԼԻԶՑՈՐԻ ԱՌԱՆՑ ԵՐԿԱՑՆԱԿԱՆ ԿԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ԼՑՈՎԻ ՀԱՏԱԿԸ

Պ. ՍԱՀԱԿՅԱՆ, Մ. ԱՂԱԲԱՅՅԱՆ

ԽԵԺԵՆԵՐ-ԹԵԽՆՈԼՈԳԻԵՐ

Ժամանակակից ալյումինի էլեկտրոլիզյորը
բաղկացած է երկու հիմնական՝ անոդային և կա-
ղոտային կոնստրուկտիվ հանդուցներից։

Էլեկտրոլիզյորի ծառայության ժամկետը լիմի-
տավորվում է կատոդային հարմարանքի աշխա-
տանքով, որովհետև էլեկտրոլիզյորի աշխատանքի
ժամանակ կատորային հարմարանքի վերահորոգ-

ման հնարավորությունը բացառվում է տեխնի-
կական դժվարությունների պատճառով՝ հարկ է
լինում այն անշատել շղթայից, քանդել կատոդա-
յին հարմարանքը և նորից մոնտաժել, այսինքն՝
կատարել այն ամենը, ինչ նախատեսվում է վան-
նայի հիմնական նորոգումով։

Կատոդային հարմարանքի քայլքայումը պայ-